

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Յիսուս փորձորկոտ ծովը կը հանդարտեցնէ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 48 of 60


www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian



Յիսուս եւ իր
աշակերտները
Նաւակի մը մէջ
էին, երբ սաստիկ
քամի մը ելաւ: Ան
Գալիլիոյ ծովը
տակն ու վրայ
ըրաւ: Այս
տեսակի քամի
կրնայ Նաւը
կոտորել եւ
ընկղմեցնել:

1

Քամին վախցուց աշակերտները Ալիքները
ծածկեցին Նաւակը, ջուր լեցնելով անոր մէջ:
Սակայն Յիսուս խոր քունի մէջ էր բարձի մը
վրայ, եւ կը քնանար քամիին մէջ: Աշակերտները



արթնցուցին
Յիսուսին,
պոռալով.
"Վարպետ,
վարպետ,
մենք կը
կորսուինք":

2

"Ինչու այսքան վախով լեցուած էք, օ՛հ, դուք անհաւատներ", Յիսուս հարցուց իր աշակերտներուն, ...




3

... ետքը Յիսուս հրամայեց քամիին, որ դադրի փչելէ եւ... Յիսուս հրամայեց սաստիկ կատղած ալիքներուն որ հանդարտին...




4

Եւ քամին հանդարտեցաւ... ծովը խաղաղ եւ հանդարտ եղաւ: Աշակերտները զմայլեցան, ըսելով. "Ո՞վ կրնայ այս ընել, որ մենչեւ իսկ հովերը եւ ծովը Աստուծոյ կը հնազանդին":




5

Ժամանակ մը ետք, Յիսուս ուրիշ բազմազբաղ օր մը անցուց: 5000 մարդէ աւելի իրեն կը հետեւէին ամայի տեղ մը:




6

Աստուծոյ ուժով, Յիսուս անոնց կերակրեց գործածելով միայն մէկ ագտիկ տղու մը ճաշը: Հիմա երեկոյ էր: Յիսուս բոլորը ցրուեց:



7

Մինչեւ իսկ աշակերտները գացին քովէն: Յիսուս անոնց նաւը իրմէ առաջ դրկեց Գալիլիոյ ծովուն դիմացի ափը:



8



Երբ ամբողջ ժողովուրդը դրկեց, Յիսուս առանցին լեռ բարձրացաւ, որ աղօթէ: Երբ իրիկուն եղաւ ինք առանձին ել:

9




Լիճին մէջ աշակերտները փոթորիկի բռնուեցան: Փոթորիկը արգելք հանդիսացաւ, որ առաջ երթան, Նոյնիսկ ժամերով դիպարելէ ետք:

10




Աշակերտները չէին գիտեր, բայց անոնց մեծ անակնկալ կը սպասէր:

11



Առաւօտեան ժամը երեքի եւ վեցի մէջ, փոթորիկով լեցուն ծովուն վրայ աշակերտները բան մը տեսան, որ իրենց վախով լեցուց:

12



"Ոգի Է" անոնք պողոտայի: Սակայն ան Յիսուսն էր, իրենց Տէրը եւ վարպետը, որ շուրին վրայէն քալելով իրենց քով կու գար:

13



"Ուրախ եղէք" Յիսուս կանչեց անոնց: "Ես եմ, մի՛ վախնաք": Պետրոսը պատասխանեց. "Տէր, եթէ այդ դուն ես, հրաման տուր ինձի, որ քովդ գամ շուրին վրայէն":

14

Ուրեմն Յիսուս
ըսաւ. "Եկո՛ւր":
Պետրոս
քաջօրէն
նաւէն դուրս
ելաւ ջուրին
վրայ եւ
Յիսուսի
քով գնաց:




15



Բայց երբ
տեսաւ հովին
սաստկութիւնը,
Պետրոս
վախցաւ եւ
ընկղմելու
սկսաւ: Ան
պոռաց. "Տէր,
ազատէ գիս":


16

Ամիջապէս Յիսուս իր ձեռքը
երկարեց եւ բռնեց Պետրոսին:
"Օ՛հ, դուն պզտիկ հաւատքով,
ինչո՞ւ կ'ասկածեցար", հարցուց Ան:
Եւ երբ Պետրոս եւ Տէր Յիսուս նաւ
ելան հովը հանդարտեցաւ:



17

Յետոյ անոնք, որոնք
նաւուն մէջ էին եկան
եւ պաշտեցին Յիսուսի
ըսելով. "Իրաւ Դուն ես
Աստուծոյ Որդին":



18

Յիսուս փոթորկոտ ծովը կը հանդարտեցնէ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 8, Մատթէոս 14,
Մարկոս 4, Դուկաս 8

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք
մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած
այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ՛ կը
պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար,
Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ
դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

